Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am


# Առավոտ

a r a v o t d a i l y

օ ր ա թ ե ր թ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 150 դրամ

77/4173/ 26 ապրիլի 2012 հինգշաբթի

ISSN 1829-2224


## Կա՞ արդյոք վախի մթնոլորտ

Ընդդիմադիր գրեթե բոլոր կուսակցություններն այս ընտրարշավում պնդում են, որ ժողովուրդն ահաբեկված է: Երեկ այդ գնահատականը կրկնեց ՀԴԿ նախագահ Արամ Սարգսյանը՝ հիմնավորելով, թե ինչու պետք չէ հավատալ սոցիոլոգիական հարցումների արդյունքներին: Եթե խոսքը բուն սոցիոլոգիայի մասին է, ապա բարձր որակավորում ունեցող ընկերությունները հարցումների ժամանակ պարտադիր տալիս են «ստուգողական հարցեր»՝ պատասխանողների անկեղծությունը ճշտելու համար:

Բնականաբար, կարելի է կասկածներ ունենալ Gellap-ի կամ ՄԵԼԿՕ-ի որակի վերաբերյալ, կարելի է նաեւ ենթադրել, որ այդ երկու սոցիոլոգիական ընկերությունները կաշառված են ՀՀ իշխանությունների կողմից: Բայց նրանց տվյալները բերել որպես «վախի մթնոլորտի» ապացույց, ինձ թվում է, այնքան էլ հիմնավոր չէ:

Կա՞, արդյոք, Հայաստանում վախի մթնոլորտ: Այդ հարցին պատասխանելու համար պետք է որոշել՝ արդյոք մեր երկրում իսկապե՞ս բռնապետական ռեժիմ է, ինչպես երբեմն պնդում են ընդդիմադիրները: Եթե՝ այո, մենք ապրում ենք այնպիսի ռեժիմի պայմաններում, ինչպիսին Հյուսիսային Կորեայում է կամ Թուրքմենստանում, ապա, անշուշտ, մեր ժողովուրդը նույնպես վախեցած է եւ ահաբեկված ու ընտրությունների ինստիտուտ ընդհանրապես գոյություն չունի: Քաղաքացիներն ընդհանրապես հնարավորություն չունեն ոչ իրական, ոչ էլ վիրտուալ տարածքում արտահայտել իրենց կարծիքը, եւ այս պարագայում իսկապես ոչ մի իմաստ չկա սոցիոլոգիական հարցումներ անցկացնելու:

Բայց Հայաստանը, իմ տպավորությամբ, բռնապետություն չէ, այլ ավտորիտար, կոռումպացված ռեժիմով պետություն: Ավելի շուտ նման է Լատինական Ամերիկայի կամ ԱՊՀ-ի որոշ երկրների: Ընդ որում, 2011թ. կեսերից (քաղբանտարկյալներին ազատելուց եւ հավաքների ազատությունը չխոչընդոտելու կուրս բռնելուց հետո) Հայաստանը դրսեւորում է մեղմ ավտորիտարիզմի նշաններ:

Այս պայմաններում ես դժվար եմ պատկերացնում, թե ինչպես են ժողովրդին ահաբեկում, վախեցնում եւ սպառնում: Եթե իմ գյուղապետը մտնի իմ կամ իմ հարեւանների տուն եւ հորդորի քվեարկել իշխանության որեւէ կուսակցության օգտին, ի՞նչ լծակներ է նա օգտագործելու մեզ վախեցնելու համար: «Ֆեյսբուքում» եւ այլ կայքերում ես կարդում եմ խիստ ընդդիմադիր կարծիքներ, որոնք արտահայտում են բուհերի դասախոսներ կամ պետական կառույցներում աշխատող չինովնիկներ: Նրանք բոլորը ներկայանում են իրենց անուն-ազգանուններով: Եթե նրանք վախենային իրենց աշխատատեղի համար, ապա հաստատ նման ձեւով չէին արտահայտվի:

Երբեմն ասվում է, որ մեր քաղաքացիների մեծ մասը չի հավատում ընտրությունների գաղտնիությանը: Իբր շատ են մարդիկ, որոնք հավատում են, թե քվեախցիկում կա ինչ-որ հզոր անտեսանելի աչք, որը կֆիքսի, թե ինչպես են իրենք քվեարկել: Ինձ թվում է՝ նման մարդիկ Հայաստանում իրականում չկան: Իսկ եթե այդ հեքիաթներին հավատացող մարդիկ, այնուամենայնիվ, մեր երկրում որակ են կազմում, ուրեմն չարժե մեր երկրում անցկացնել ընտրություններ եւ խոսել ժողովրդավարության ու լեգիտիմության մասին:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

## «Եթե մարզպետը չկարողանա ձայներ տանել՝ նրան «ռադ են անելու»

Երեկ Արարատի մարզի Արտաշատ քաղաքում ՀՅԴ ներկայացուցիչ Աղվան Վարդանյանը, իր ձեւակերպմամբ՝ «նախընտրական խայտառակ խաղեր տվողներին» կոչ արեց իրենց տղամարդու տեղ պահել ու արտաշատցիներին էլ հորդորեց  անգիտ խղճով քվեարկել ՀՅԴ-ի օգտին ու չվախենալ մարզպետից, քաղաքապետից, գյուղապետից կամ մեկ այլ չինովնիկից, որովհետեւ եթե մարզպետը չկարողանա ձայներ տանել իր կուսակցության համար, հենց այդ կուսակցության պարագլուխները նրան «ռադ են անելու»: «Քվեարկեք Դաշնակցությանը, ձեր գլխից մազ չի պակասի: Մենք մեր գույնը չենք փոխում ու չենք դավաճանում, մենք ամբոխավար չենք: Մենք չենք հիասթափեցնում, մենք ինչ ասել ենք՝ անելու ենք: Մենք Դաշնակցություն ենք, հզոր ու միասնական թիմ ենք եւ մեկ մարդու կուսակցություն չենք: Մենք թշնամի չունենք այս երկրում, բայց կպատժենք հայ մարդուն սպառնացողներին ու ստորացնողներին»,- հայտարարեց ՀՅԴ ներկայացուցիչը:




Կարդացեք նաեւ՝ էջ 3:

## ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

### Ի՞նչ անի Սուրիկ Խաչատրյանը

«Ի՞նչ անեմ՝ իր օգտին էլ քարոզե՞մ»,- այսպես անկեղծ պոռթկաց Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը՝ պատասխանելով «Առավոտի» հարցին՝ ինչո՞ւ է հակաքարոզչություն անում թիվ 37 ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածու առաջադրված Գորիսի նախկին քաղաքապետ Սամվել Հարությունյանի դեմ: Ըստ Սամվել Հարությունյանի՝ Սուրիկ Խաչատրյանը մարզում զբաղված է ՀՀԿ-ի, ՀՀԿ-ի մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուի օգտին քարոզով եւ իր դեմ հակաքարոզչությամբ: Սուրիկ Խաչատրյանն էլ իր հերթին մեղադրանքներ հնչեցրեց Սամվել Հարությունյանի հասցեին, թե իբր վերջինս «պրոֆեսիոնալ շանտաժիստ է»:

Կարդացեք էջ 3:

### Պիջակի տակի զենքը գայլերի եւ բորենիների համար է

ՀԱՕԿ նախագահ Գագիկ Ծառուկյանը երեկ մարզաշխարհի ներկայացուցիչների հետ հանդիպման ավարտին լրագրողներին խնդրեց իրենց մի կարճ ժամանակ մենակ թողնել մարզիկների ու մարզիչների հետ՝ մասնագիտական որոշ հարցերի շուրջ զրուցելու համար: Եվ մինչ լրագրողները դուրս կգային դահլիճից, ՀԱՕԿ նախագահն ասաց. «Որոշ լրատվամիջոցներ շտապեցին գրել, թե քարոզարշավի ժամանակ Գագիկ Ծառուկյանի պիջակի տակից զենք է երեւացել: Ես չեմ հրաժարվում: Բայց ուզում եմ իմանաք, որ այդ զենքը ոչ թե մարդկանց, այլ գայլերի եւ բորենիների համար է»:

### Գնդակոծվել է Տավուշի մարզի Դովեղ գյուղը

Երեկ հայ-ադրբեջանական սահմանագոտու հյուսիս-արեւելյան հատվածում արձանագրվել է հրադադարի ռեժիմի խախտման դեպք: Ադրբեջանական կողմից տարբեր տրամաչափի հրազենային զենքերից գնդակոծվել են Տավուշի մարզի Դովեղ գյուղի պաշտպանական դիրքերը, կրակոցներ են արձակվել գյուղի ուղղությամբ: Վնասվել է գյուղի մանկապարտեզը եւ մանկապարտեզի մոտ կայանած «Գազ 53» մակնիշի ավտոմեքենան: Անվտանգության նկատառումներից ելնելով՝ մանկապարտեզի սաները եւ անձնակազմը տարհանվել են: ՀՀ ԶՈւ առաջապահ ստորաբաժանումների ձեռնարկած համապատասխան միջոցառումների արդյունքում հակառակորդը լռել է: Հայկական կողմից տուժածներ եւ վիրավորներ չկան:

## ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

### Ասուլիս

Այսօր, ժամը 13-ին, «Տեսակետ» ակումբի հյուրն է ԱԺ պատգամավորի թեկնածու Խոսրով Հարությունյանը:

### Եղանակ

Երեւան  + 7  + 23, Շիրակ  - 1   + 17, Կոտայք  - 1   + 17, Գեղարքունիք  - 1 + 17,  Լոռի  + 3 + 19,  Տավուշ + 7  + 21, Արագածոտն լեռներ - 1  + 17,  Արագածոտն նախալեռն.  + 5 + 22,  Արարատ  + 5 + 23,  Արմավիր  + 5 + 23,  Վայոց Ձոր լեռներ  - 1  + 17, Վայոց Ձոր նախալեռն. + 5  + 23  ,  Սյունիքի հովիտներ  + 9  + 19, Սյունիքի նախալեռներ + 4  + 17

Առավոտ aravot daily
ՀԻՆԳՇԱԲԹԻ 26.04.2012



## ՀԱԿ-ը բռնագանձելու է անօրինական կուտակած գումարները



Երեկ «Սիվիլիթաս»-ը կուսակցությունների ներկայացուցիչների մասնակցությամբ հերթական բանավեճն էր կազմակերպել, որին ներկայացել էին միայն Դաշնակցության, «Ժառանգության», «Բարգավաճ Հայաստանի» եւ ՀԱԿ-ի ներկայացուցիչները:

Հանդիպման ժամանակ ՀԱԿ ներկայացուցիչ Մովսես Արիստակեսյանը վստահեցրեց, որ իրենց առաջարկած սոցիալական փաթեթը բավականին մրցունակ է՝ 80.000 դրամի են հասցնելու նվազագույն աշխատավարձը, պայքարելու են ստվերային տնտեսության դեմ:

Մասնակիցներից մեկը նրանից հետաքրքրվեց՝ ինչպե՞ս են պայքարելու ստվերի կրճատման ուղղությամբ, ու ի՞նչ երաշխիքներ կան, որ ընտրություններում իրենց հաղթանակի դեպքում ՀՀԿ-ական օլիգարխներին չեն փոխարինի ՀՀՇ-ական օլիգարխներ: Ի պատասխան՝ պարոն Արիստակեսյանն ասաց. «Ձեզ պետք է մի քիչ լուսավորել, թե ինչ է Հայ ազգային կոնգրեսը, դա ՀՀՇ չէ, այն 18 կուսակցությունների եւ հասարակական-քաղաքական կազմակերպությունների միավորում է, որտեղ կան քաղաքական տարբեր հայացքների տեր մարդիկ: Մեր «100 քայլ» ծրագրում հստակ կան այն քայլերը, որ ոչ «Բարգավաճը», ոչ Հանրապետականը, ոչ կոմունիստը չեն կարող լինել օլիգարխ: Այո, բռնագանձելու ենք ապօրինի, ոչ օրինական իշխանությունների ժամանակ գումարները ու բերելու ենք բյուջե»: Հարցին, թե Գագիկ Ծառուկյանի գումարներն է՞լ են պետբյուջե բերելու, պարոն Արիստակեսյանն ասաց՝ այո, եւ ընդգծեց, որ խոսքը վերաբերում է անօրինական ճանապարհով կուտակած գումարներին:

Ա. ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱԿ-ն արդեն նախապատրաստվո՞ւմ է

Չնայած դեռ ընտրություններին բավական ժամանակ կա, սակայն, ըստ HayNews.am-ի տեղեկությունների, Հայ ազգային կոնգրեսն արդեն իսկ փորձում է այնպես անել, որ քվեարկությունից հետո Եվրոպական լիբերալ-դեմոկրատական կուսակցությունը, որի անդամն է նաեւ ՀԱԿ-ի առանցք կազմող ՀՀՇ-ն, հայտարարի, թե Հայաստանում խորհրդարանական ընտրություններն անցել են աղաղակող կեղծիքներով: Կայքի տեղեկություններով՝ այդ նպատակով Բրյուսելում է ՀՀՇ վարչության անդամ, ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախկին նախագահ Հովհաննես Իգիթյանը, ում տեղում միացել է նախկին դիվանագետ, այժմ Բելգիայում բնակվող եւ ՀԱԿ անդամ Մուշեղ Մկրտչյանը: Վերջիններս Տեր-Պետրոսյանի հանձնարարականով արդեն իսկ պատրաստել են մի փաստաթուղթ, որը պետք է ընթերցվի Եվրոպայի լիբերալ-դեմոկրատական կուսակցության կողմից ընտրություններից անմիջապես հետո: Այնտեղ նշվում է, որ իշխանությունները կեղծել են ընտրությունները, կատարել լցոնումներ, կաշառել եւ ահաբեկել մարդկանց:

Հովհաննես Իգիթյանի մեկնաբանությունները այս առիթով կներկայացնենք առաջիկայում:

Ն. Գ.

# «ՀԱԿ-ն ու ՀՅԴ-ն լեգիտիմացնում են ԲՀԿ-ի մուտքը ընդդիմության դաշտ»

### Համոզված է «Ժառանգության» մամուլի խոսնակ Հովսեփ Խուրշուդյանը

Վերջին շրջանում «Ժառանգությանը» պարբերաբար քննադատում են ՀՀԿ-ի հետ «սիրավեպ» ունենալու մեջ: Երեկ Aravot.am-ը կուսակցության խոսնակ Հովսեփ Խուրշուդյանից հետաքրքրվեց՝ վերջին շրջանում կա՞ կուսակցության վերաբերմունքի փոփոխություն իշխող կուսակցության նկատմամբ: Ըստ նրա՝ «Մեր հռետորաբանությունից պետք է թե՛ հասարակությունը, թե՛ մամուլը տեսներ, որ նման մեղադրանքներն անհեթեթ են: Այն, որ մենք շարունակում ենք նույն ուժգնությամբ քննադատել կոալիցիոն բոլոր կուսակցություններին, բոլորն են տեսնում»: Մեր դիտարկմանը՝ Ձեզ մեղադրում են, որ «Ժառանգության» քննադատությունը նմանվում է արդեն «գեղամյանական» քննադատության՝ Հովսեփ Խուրշուդյանը պատասխանեց. «Ինչո՞վ, որ մենք միայն ՀՀԿ-ի՞ն չենք քննադատում իրենց պես, դրա՞ համար: Իրենք ասում են՝ դուք միայն ՀՀԿ-ին պետք է քննադատեք, իսկ եթե դուք միայն ՀՀԿ-ին չեք քննադատում, այլ նույն կերպ ԲՀԿ-ին կամ «Օրինացին» եք քննադատում, ուրեմն դուք ՀՀԿ-ի հետ ինչ-որ բաների մեջ եք»: Մեր հարցին՝ ԲՀԿ-ն քայլ արեց, միացավ միասնական շտաբին, դա հիմք չի՞ տալիս հավատալու ԲՀԿ-ին՝ նա պատասխանեց. «Ստորագրությունը դեռ քայլ չի, կոնկրետ գործելն է քայլ: Այսօր ի՞նչ է անում «Բարգավաճը»՝ շարունակում է կեղծ բարեգործությունները, որը մենք սկզբից ասել էինք, որ պետք է արգելվի: Բայց նրանք շարունակում են անել»:



ՀԱԿ առաջնորդ Լեւոն Տեր-Պետրոսյանը հայտարարեց, որ գուցե իր կրթությունը չի ներում, բայց իր համար անհասկանալի է «Ժառանգության» վարքը՝ միասնական շտաբի հետ կապված: Այս առնչությամբ Խուրշուդյանն առաջին նախագահի համար մանրամասն բացատրեց, թե ինչ են իրենք մտածում. «Այն, ինչ պետք է անի միասնական շտաբը, «Ժառանգությունն» արդեն 5 տարի է՝ անում է: Այդ միասնական շտաբում «Ժառանգությունն» իր հստակ խնդիրները դրել է, թե ինչ պայմաններով կխորացնի համագործակցությունը եւ նրանց հետ կմասնակցի շտաբի աշխատանքներին: Եթե խոսք կա կոնսենսուսի մասին, այսինքն՝ որ այդպես են լուծումներ տրվում, ուրեմն պետք է այդ զիջումն արվեր, մանավանդ, որ ինչ-որ գերբնական բան չէր մեր պահանջը: Այդ ինչո՞ւ ԲՀԿ ղեկավարը կարողանում էր կոալիցիոն հուշագիրը ստորագրել առաջին դեմքով, իսկ այս դեպքում ինքն առաջին դեմքով չի ստորագրում: Ինչո՞ւ «Ժառանգությունը» ոստիկանապետին ուղղված նամակը ստորագրում է, միանում է ՀԱԿ-ին եւ Դաշնակցությանը, իսկ ԲՀԿ-ն նույնիսկ 7-րդ կարգի ներկայացուցչի ստորագրությամբ չի միանում: Ինչպե՞ս ստացվեց, որ դրա արդյունքում ոչ մեկը չմեղադրեց «Բարգավաճին»՝ ՀՀԿ-ի հետ «սիրավեպ» անելու համար, որովհետեւ այսօր կոալիցիայի մեջ են եւ չեն էլ թաքցնում, որ հաջորդ կոալիցիայի մեջ էլ են լինելու: Այսինքն՝ մեր խնդիրը ո՞րն է՝ նպաստել նրան, որ «Բարգավաճը» շարունակի՞ նման գործելաոճը, ընդդիմադիր դաշտ մտնելու իր ճիգերը՝ ընտրություններից առաջ: Իսկ դուք հիշո՞ւմ եք, չէ՞, թե ինչ է գրված եղել կոալիցիոն հուշագրում՝ ընտրություններից առաջ կոալիցիոն գործընկերները չպետք է ավելացնեն իրենց տեղերը միմյանց հաշվին: Եթե միմյանց հաշվին չէ՝ ո՞ւմ հաշվին պետք է ավելացնել՝ ընդդիմությա՞ն հաշվին: Դե, բնականաբար, եթե այդպես պետք է լինի, ուրեմն իրենք «Բարգավաճին» առաջարկել են ընդդիմության դաշտից գնալ եւ այդ ձայները ստանալ: Դրա համար ի՞նչ է պետք՝ ինքը պետք է ներկայանա որպես նոր ընդդիմություն: Դա անընդունելի է, եւ այդ գործընթացի լեգիտիմացումը մեզ համար անընդունելի է»: Մեր հարցին՝ այնուամենայնիվ, ընդունո՞ւմ եք, որ հասարակությունը դրական չի ընկալում «Ժառանգության»՝ միասնական շտաբից դուրս գալը, որակումներ կան, որ ավելորդ ամբիցիաներ եք դրսեւորում՝ նա պատասխանեց, որ դաշտն ապականված է, եւ դրան նպաստում են նաեւ պատվեր կատարող լրատվամիջոցները. «Երբեք այդ ԶԼՄ-ներն այսօր չեն քննադատում այն ուժին, որը հստակ պայմանագրով ասել է, որ 2013-ին պաշտպանելու է Սերժ Սարգսյանին, որին հիմա այդքան ուժգնորեն քննադատում են: Նույնիսկ մեզանից էլ ավելի ուժգնորեն հանկարծ սկսեցին քննադատել ՀՀԿ-ին եւ Սերժ Սարգսյանին, բայց չեն տեսնում, որ այդ պայմանագիրը դեռ գործում է, ոչ ոք չի հրաժարվել դեռ այդ ստորագրությունից, ԲՀԿ-ն չի հրաժարվել, հետ չի կանչել իր ստորագրությունը: Ավելին՝ նրա ղեկավարն ասել է, որ իր ստորագրած ցանկացած փաստաթուղթ արժեք ունի, եւ նա որեւէ բան չի ստորագրում հենց այնպես: Ի՞նչ է դա նշանակում, որ նա ավելի շատ ձայներ է ուզում տանել ընդդիմությունից եւ ավելի շատ ձայներով մտնել պառլամենտ, որ ավելի ուժգնորեն աջակցի Սերժ Սարգսյանին 2013-ին: Եվ ո՞ր ուժերն են օգնում եւ լեգիտիմացնում իր մուտքը դեպի ընդդիմադիր դաշտ»:

ՀՌԻՓՍԻՄԵ ՋԵԲԵՋՅԱՆ

# ՕԵԿ ղեկավարը հորդորեց ընտրակաշառք վերցնել, բայց ընտրել «ճշտին»

«Օրինաց երկիր» կուսակցության քարոզարշավը երեկ Կենտրոն համայնքի բնակիչների հետ էր: Շառլ Ազնավուրի հրապարակում կուսակցության ղեկավար Արթուր Բաղդասարյանը նախ կոչ արեց գիտակցաբար գնալ ընտրությունների, ապա ասաց, որ Կենտրոնի բնակչության խնդիրները նրանք իրենց ծրագրում առաջնահերթ են համարում. «Երեւանի կենտրոնում բազմաթիվ մարդկանց դուրս շպրտեցին, նրանց սեփականությունը դարձավ վիճարկման առարկա, ու նրանք տարբեր դատարաններում իրենց իրավունքներն են պաշտպանում: Մտահոգությամբ եմ ասում, դեռ այն ժամանակ էլ, երբ Ազգային ժողովի նախագահ էի, ասում էի՝ չի կարելի Հյուսիսային պողոտայում մի քառակուսի մետրը վաճառել 10-20 դոլարով, երբ բոլորս գիտենք դրա գինն ինչ արժե… Մեր ուղղախոսությունը բերեց նրան, որ մենք խորհրդարանում այդ խնդիրը մշտապես բարձրացնում էինք»:




ՕԵԿ ղեկավարը հավաքվածներին հորդորեց գիտակցաբար գնալ ընտրության. «Պետք է գիտակցենք, որ ընտրություն ենք կատարելու վաղվա օրվա համար, ընտրելու ենք՝ ինչպիսին պետք է լինի Հայաստանը առաջիկա 5 տարիներին: Այն, որ Հայաստանում անհրաժեշտ են վճռական փոփոխություններ, ակնհայտ է, այդ փոփոխությունները պետք է կատարեն քաղաքական ուժերը: Մեր կուսակցությունը ամենախոշոր կառույցներից է, որն իր շարքերում ունի 170 հազար քաղաքացի, Ազգային ժողովում մեր խմբակցությունն ամենաակտիվներից ու ամենամեծ խմբակցություններից մեկն է»:

Պարոն Բաղդասարյանը, անդրադառնալով ընտրակաշառքներին, ասաց. «Այսօր տարբեր մարզերում ցուցակագրում են, փորձում են փողով գնել նրանց քվեները, դիմում եմ այդ մարդկանց, որոնք փողը վերցնելու են, հորդորում եմ գոնե ճիշտ ընտրություն անեն:

Մեր կուսակցությունը 15 տարվա ընթացքում իր ընտրողներին 5000 դրամ չի խոստացել, այլ՝ միայն լուսավոր ծրագրեր: Կապ չունի՝ նախագահ ես, թե շարքային մարդ… պետք է կառուցենք այն երկիրը, որտեղ օրենքի ուժով հավասարություն է ապահովվում բոլորի համար, բայց սա հեքիաթ է Հայաստանի համար, պետք է պայքարենք»: Ավելի ուշ նա հարցրեց՝ ովքե՞ր են հավաքվածներից կուսակցության անդամ, ապա կոչ արեց վանկարկել հաղթանակ. «Պետք է համախմբենք մեր ջանքերը, որ մեր երկիրը դարձնենք ավելի լավը, շատ բան ասել ենք՝ չեն հավատացել, բայց պայքարել ենք՝ դարձրել իրականություն»:

Ա. ՍԻՄՈՆՅԱՆ

Ա aravot daily
ՀԻՆԳՇԱԲԹԻ 26.04.2012

# «Սաշիկ Սարգսյանն էլ ոչ մի անգամ չեկավ»

## Թիվ 37 ընտրատարածքում ՀՀԿ-ի առաջադրած թեկնածու Հայկ Գրիգորյանը խուսափում է բանավեճերից

Սյունիքի մարզի թիվ 37 ընտրատարածքը ներառող բնակավայրերի մոտ 70 տոկոսում 50-ից ավելի հանդիպումներից հետո Գորիսի նախկին քաղաքապետ, այդ ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածու Սամվել Հարությունյանի տպավորությունները եւ դրական են, եւ բացասական: Դրական՝ այն իմաստով, որ բնակչության մոտ, ըստ նրա, պայքարելու ոգին չի կոտրվել, բացասական՝ որ «Սյունիքի հոշակավոր» մարզպետը «շարունակում է իր ոճին հարիր կամայականությունները»: Այս ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով պայքարն ընթանալու է ՀՀԿ ներկայացուցիչ Հայկ Գրիգորյանի, ինքնաառաջադրված առողջապահության նախկին փոխնախարար Թաթուլ Հակոբյանի, ում վարչապետ Տիգրան Սարգսյանը ժամանակին հեռացրեց աշխատանքից, ՀԱԿ-ից վերջերս հեռացած, Գորիսի նախկին քաղաքապետ Սամվել Հարությունյանի եւ նրա երբեմնի տեղակալ, ՀԱԿ-ի կողմից առաջադրված Վարազդատ Վարդազարյանի միջեւ:

Սամվել Հարությունյանը վստահ է, որ մայիսի 6-ին, ի դեմս իր հաղթանակի, այդ ընտրատարածքում «ժողովրդական հաղթանակ» է գրանցվելու, քանի որ «թիվ 37-ում երբեք ու երբեք այն կարծիքը չեն ունեցել, որ սա ընդամենը հաղթանակ պիտի լինի. լինելու է հաղթանակ՝ կամայականության, անազատության, անբարոյականության դեմ»: Մեր զրուցակիցը չհամաձայնեց «Առավոտի» այն դիտարկմանը, որ ընտրապայքարը խաղաղ է ընթանում, մանավանդ, որ իր տարբեր քաջագործություններով հայտնի Սյունիքի մարզպետը նախընտրական շրջանում է առավել աչքի ընկել:





«Իհարկե, բիրտ վերաբերմունքի դրսեւորումները շատ չեն: Հատկապես իմ նկարների մի մասն են պոկվել, մանավանդ, Գորիս քաղաքում: Նախապատրաստական շրջանն է, եւ Սյունիքի հոշակավոր մարզպետն արդեն մի քանի օր է, ինչ սկսել է իրեն հայտնի մեթոդներով, ըստ էության, ահաբեկելով պետական պաշտոնյաներին, հիմնարկների ղեկավարներին, գյուղապետերին, քաղաքապետերին, մանր ու միջին գործարարներին՝ հարկադրում է անխտիր աշխատել ՀՀԿ-ի օգտին՝ ապահովելով առնվազն 90 տոկոս ձայներ: Ամենայն հավանականությամբ, մտադիր է նախկինի նման, մանավանդ Գորիս եւ Սիսիան քաղաքներում, բացակաների փոխարեն քվեարկել, ինչը մենք, անշուշտ, թույլ չենք տալու»,- ասաց Սամվել Հարությունյանը՝ վստահություն հայտնելով, որ այդ մարդիկ գիտակցում են, որ ահաբեկչության, վախի, սարսափի մթնոլորտում, կամակատար լինելը որեւէ մեկին պատիվ չի բերում: «Տպավորություն ունեմ, որ նրանց մոտ արժանապատվության զգացումը կա, եւ ամսի 6-ին նրանք չեն ենթարկվի պարտադրանքներին ու ազատորեն կարտահայտեն իրենց կամքը»,- գտնում է մեր զրուցակիցը:

Հետաքրքիր է, որ քարոզարշավի մեկնարկին Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը հայտարարել էր, թե Սյունիքում ՀՀԿ-ն 80 տոկոս ձայն պետք է հավաքի, իսկ հիմա արդեն խոսում է 90 տոկոս ձայների մասին: Aravot.am-ը Սուրիկ Խաչատրյանից հետաքրքրվեց՝ ի՞նչ մեխանիզմով է ինքն այդ հաշվարկներն անում: «Հիմա դրա մասին չխոսենք, ամսի 6-ին կխոսենք»,- ասաց մարզպետը: Հարցին՝ այդքան շա՞տ եք պատրաստվում կեղծել, Սուրիկ Խաչատրյանը պատասխանեց. «Չէ, բնավ: Ստեղ կեղծիք չի լինի: Հնարավոր էլ չի, որ ստեղ կեղծիք լինի»: Դիտարկմանը՝ այդ դեպքում ինչպե՞ս է նման հայտարարություններ իրեն թույլ տալիս, մարզպետը հակադարձեց. «Դե, ժողովուրդն ընտրելու է, էլի: Ի՞նչ կա էդտեղ բացահայտելու: Ամենահեշտ, պրիմիտիվ բանն ա՝ ժողովուրդը գնալու ա եւ ընտրելու»: Հաջորդ հարցին էլ՝ այսինքն՝ Սյունիքում ժողովուրդն այդքան գո՞հ է ՀՀԿ-ից, այդքան շա՞տ է սիրում ու հավատում, Սուրիկ Խաչատրյանը պատասխանեց. «Դե, իհարկե, հավատում են: Ես ստեղ Հանրապետական կուսակցության նախագահն եմ: Վերջը, մենք էլ ունենք արած գործ, մարզի ամենախոշոր հարկատուն էլ ունի արած գործ, ժողովուրդն էլ տեսնում է մեր արած գործը»:

Սամվել Հարությունյանից հետաքրքրվեցինք նաեւ՝ չե՞ն փորձում մյուս թեկնածուների հետ համագործակցության ֆորմատներ գտնել՝ մարզպետի կամայականությունների դեմ միասնական եւ ավելի արդյունավետ պայքար տանելու համար: Նա տեղեկացրեց, որ տեղական կազմակերպություններից մեկն օրերս բանավեճ է կազմակերպել թեկնածուների միջեւ, որը հետաձգվել է նաեւ համացանցով, եւ ՀՀԿ-ի թեկնածուն չի բարեհաճել անգամ անձամբ ներկայանալ, բանավեճին մասնակցել է նրա կողմից լիազորված անձը: «Տխրահռչակ ավանդույթը շարունակվում է: Անցած ընտրություններում Սաշիկ Սարգսյանն էլ ոչ մի անգամ չեկավ, չմասնակցեց, չխոսեց: Հիմա ես բանավեճի հրավեր եմ ուղղում ՀՀԿ-ի առաջադրած թեկնածուին, եւ եթե նա չընդունի ու չներկայանա, ապա ինձ թույլ կտամ ասել, որ նա պարզապես գիտակցում է, որ ինձ հետ չի կարող բանավիճել»,- ասաց Հարությունյանը՝ հավելելով, որ մյուս թեկնածուներին եւ բոլոր մտահոգ մարդկանց ինքն առաջարկել է, համատեղ կամ անջատ, անել ամենը, որպեսզի ընտրություններն անցնեն ՀՀ օրենքներին համապատասխան: Համագործակցության արձագանքներ չի ստացել:

«Ես համոզված եմ, որ ինչպես նախկինում եմ ռեկորդներ գրանցել ընդդիմադիր թեկնածուների շրջանում՝ ձայներ վաստակելու առումով, այս անգամ եւս իմ ստացած ձայների թիվը ռեկորդային է լինելու: Ես ունեմ համախոհների լուրջ թիմ, որոնք պատրաստ են մարտնչել հանուն արդարության»,- վստահ է Սամվել Հարությունյանը:

ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՀՅԴ-ն իր ներկայացրած ծրագրով մրցակցությունից դուրս է

## Երեկ Արտաշատում հայտարարեց ՀՅԴ ներկայացուցիչ Արծվիկ Մինասյանը

Հայ հեղափոխական դաշնակցությունը երեկ Արարատի մարզի Արտաշատ քաղաքում էր: Դաշնակցության հանրահավաքն այս քաղաքում տեղի ունեցավ թատրոնին հարող տարածքում, ուր, ինչպես մյուս բոլոր մարզային կենտրոններում, արդեն մեծ բեմ էր տեղադրվել, որովհետեւ ընտրողների հետ հանդիպմանն էլի համերգային ծրագիր էր հաջորդելու: Ելույթով հանդես եկան ոչ միայն ՀՅԴ խորհրդարանական խմբակցության պատգամավորներ Արծվիկ Մինասյանը, Արմեն Ռուստամյանն ու կուսակցության քարոզչության պատասխանատու Աղվան Վարդանյանը, այլեւ այդ ընտրատարածքում ՀՅԴ կողմից մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածու Մանվել Հայրապետյանը:

Մասնավորապես Արծվիկ Մինասյանն իր ելույթում շեշտեց, թե՝ ընտրություններին քիչ օր է մնացել, արտաշատցիներն էլ արդեն տեսել են ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերին, ծանոթ են նրանց ծրագրերին ու մտադրություններին, նաեւ հայտարարեց, թե արդեն հաստատվել է, որ ՀՅԴ-ն իր ներկայացրած ծրագրով մրցակցությունից դուրս է: «Մենք ունենք մրցունակ, արդար ու բարեկեցիկ երկիր կառուցելու ծրագիր, որը հիմնված է արդարության ու ազատության սկզբունքների վրա»,- հայտարարեց Արծվիկ Մինասյանը:

Նա հակիրճ անդրադարձավ այդ ծրագրի մասնավորապես սոցիալ-տնտեսական հատվածներին՝ համարելով, որ այդ խնդիրները սրացված զգացվում են նաեւ Արարատի մարզում եւ Արտաշատում: Նա հայտարարեց, թե վերջիններիս թիվ մեկ խնդիրը աշխատատեղերի բացակայությունն է, ու խոստացավ, որ Դաշնակցության՝ ԱԺ-ում մեծ ներկայության դեպքում այդ կուսակցությունը ծրագրում է 200 հազար աշխատատեղ բացել, նաեւ շեշտակիորեն բարձրացնել աշխատավարձերը՝ 500 հազարից ոչ պակաս, կենսաթոշակները ներկայիս 31.255 դրամի փոխարեն սահմանել 63.000 դրամ, ամեն տարի 5-6 հազար անհատույց բնակարան կառուցել սոցիալապես անապահով մարդկանց եւ երիտասարդ ընտանիքների համար, ամեն մի երեխայի համար նպաստ սահմանել 20 հազարական դրամ, իսկ 4-ից ավելի երեխա ունեցողներին 80 հազար դրամ նպաստ հատկացնել: Արծվիկ Մինասյանը խոստացավ, որ այս ծրագիրը իրատեսական է, եւ Դաշնակցությունն իր ծրագրում մատնանշել է նաեւ դրա համար անհրաժեշտ ֆինանսավորման աղբյուրները: Նա նաեւ հայտարարեց. «Մենք՝ որպես սոցիալիստական եւ հեղափոխական ուժ, երաշխավորելու ենք հեղափոխություն»՝ նկատի ունենալով ՀՅԴ-ի նախընտրական ծրագիրը, որը, նրա ասելով, Հայաստանի հասարակության համար ապահովելու է տարածաշրջանի երկրներին չզիջող կենսամակարդակ, իսկ որոշ երկրներից նաեւ առաջ է լինելու: Պատգամավորը նաեւ ամեն տարի հասարակությանը հաշվետու լինելու խոստում տվեց ու կոչ արեց ընտրել ՀՅԴ-ին. «Այո ասենք Դաշնակցությանը, որպեսզի վերադարձնենք մեր արժանապատվությունը, մենք ասում ենք, որ ՀՅԴ-ի հաղթանակի դեպքում հաղթելու է հայի այն տեսակը, որը երբեք գլուխը չի խոնարհում եւ պատրաստ է կերտել ազատ, անկախ ու միացյալ Հայաստան»:




Աղվան Վարդանյանն էլ հայտարարեց, թե մայիսի 6-ին ընտրությունները վերջանալու են, ու ընտրություններն աշխարհի վերջը չեն, մարդիկ դեռ կանգնելու են իրար կողքի եւ հիշեն, թե ով ինչպես է իրեն պահել այս ընթացքում:

Նա ասաց, թե բոլորս ՀՀ քաղաքացիներ ենք, ու մեր նպատակը նույնն է՝ տեսնել մեր երկիրը բարեկեցիկ ու անվտանգ, ունենալ երկրում բարոյական եւ առողջ մթնոլորտ, ունենալ քաղաքացիներ, որոնք իրենց իրավունքների տերն են ու ոչնչից չեն վախենում: «Մի քանի այլասերվածների չհաշված՝ բոլորս երազում ենք երկիր, պետություն, որտեղ ոչ ոք իրավունք չունի եւ չի կարող մեկ ուրիշին սպառնալ, ստորացնել՝ լինի նախարար, մարզպետ, պետական բարձրաստիճան չինովնիկ, գյուղապետ, թե թաղի «լավ տղա»: Այս օրերին ՀՀ նախագահն իր բոլոր հանդիպումներում համբերատար հենց սրա մասին է խոսում: Խոսում է հանդուրժողականությունից, ազատ ու արդար ընտրություններ անցկացնելուց, ընտրակաշառքը բացառելու կարեւորությունից, բայց ի՞նչ է կատարվում ներքեւում: Կա՞ մեկը, որ չգիտի, թե ինչ է կատարվում: Իրենց չհասկացողների տեղ դնողների համար հայտարարում եմ, որ ներքեւում համատարած 10 հազար դրամ ընտրակաշառքի խոստում ու բաժանում է: Մարզպետերը, գյուղապետերը, իրավապահները մարդկանց կանչում են, վախեցնում, ստիպում են աշխատել իշխանության համար: Իշխանություն ասելով՝ նկատի ունեմ գործող կոալիցիան: Ցուցակներ են կազմում, անձնագրերի պատճեններ են հավաքում, ասում են՝ քեզ, քո բարեկամին գործից կազատենք, կդատենք: Անհնազանդներին հարկային ու ոստիկանություն են կանչում, գույքահարկ ու վարձավճար են զեղչում»:

Իշխանություններին ու նաեւ իշխանության մեծամասնական այն թեկնածուներին, որոնք, Աղվան Վարդանյանի ասելով, կարծում են, թե իրենց ամեն ինչ թույլատրելի է ու մարդկանց են ստորացնում, կոչ արեց՝ «հանգստացեք: Հանրապետության նախագահի խոսքերը ձեզ չե՞ն վերաբերում: Թե՞ նորից ուզում եք մեր երկիրը ցնցումների մեջ գցել, արտաքին ուժերի ճնշումների դուռը բացել: Թե՞ մտածում եք՝ ինչքան երկիրը թույլ լինի, էնքան ձեր գործերն աջ կգնան: Սա ձեր անձնական ընտրությունը չէ: Սա համապետական ընտրություն է, որտեղ որոշվելու է, թե հաջորդ 5 տարին որ ուժերն են կառավարելու երկիրը, ու ինչ ուղղությամբ է Հայաստանը շարժվելու»:

ՆԱԻՐԱ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

# Ո՞վ է վերահսկում «ռուսաստանյան շենգեն» վիզայով ՀՀ-ից հեռանալու բիզնեսը

## Հարյուրավոր ՀՀ քաղաքացիներ ՌԴ-ում գործող եվրոպական դեսպանատներից «շենգեն» վիզաներ են ստանում՝ մեկ օր անգամ Ռուսաստանում չլինելով:

Այս օրերին իրավապահ մարմինների աչքից զարմանալիորեն վրիպել են List.am կայքում տեղադրված մի քանի հայտարարություններ, որոնց հեղինակները, մեղմ ասած, հանցանք են գործում, էլ չենք ասում, որ մեծ գումարներ աշխատելով՝ մեր երկրից համակարգված արտագաղթ են կազմակերպում:

Կեղծանունների տակ թաքնված որոշ մարդիկ, հազարավոր եվրոների դիմաց, ՀՀ քաղաքացիներին առաջարկում են «շենգեն» վիզաներ: Սակայն եթե մինչ այս «շենգեն» վիզայի գործ անողները մեր երկրում գործող եվրոպական երկրների դեսպանատների միջոցով էին «շենգեն» դասավորում, ապա այժմ միջնորդները խոստանում են այդ վիզաները «սարքել» Ռուսաստանի Դաշնությունում գործող դեսպանատներում: Այսինքն՝ Հայաստանում բնակվող եւ իր կյանքի ընթացքում Ռուսաստանի երես չտեսած ՀՀ քաղաքացին կարող է հեշտությամբ վիզա ստանալ, ասենք՝ Ռուսաստանում Լեհաստանի դեսպանատնից: Հայտարարության տեքստի համաձայն, հայաստանցին վճարելով 4500 եվրո, կստանա եվրոպական իր նախընտրած երկրի մուտքի արտոնագիր: Հայտարարության հեղինակները 100 տոկոսանոց երաշխիքներ են խոստանում: Նրանք այնքան վստահ են գործը գլուխ բերելու հարցում, որ անգամ գումարը ոչ թե գլխանց են վերցնում, այլ անձնագրում վիզայի առկայության դեպքում: ՀՀ քաղաքացուց նույնիսկ չի պահանջվում Ռուսաստան մեկնել. անձնագիրը տանում են, վիզան խփում ու բերում: Այս մանրամասները ճշտեցինք, երբ List.am-ում նշված axrana31@mail.ru եւ shengenv@yahoo.com էլեկտրոնային հասցեներով նամակ գրեցինք հայտարարության հեղինակներին: Նշելով, որ ցանկանում եմ «շենգեն» ստանալ, հետաքրքրվեցի, թե ինչքա՞ն գումարով են գործը սարքում, որքա՞ն ժամանակում վիզան պատրաստ կլինի, արդյոք որեւէ խնդիր չե՞մ ունենա իրավապահների հետ սահմանը հատելիս եւ այլն: Հարցրել էի նաեւ, թե լինելով ՀՀ քաղաքացի՝ ինչպե՞ս պետք է այլ երկրի դեսպանատներն ինձ վիզա տան, երբ ո՛չ ՌԴ-ում գրանցում ունեմ, ո՛չ էլ ժամանակավորապես բնակվում եմ այնտեղ: Նկատենք, որ սրանք այն կարեւոր պայմաններից են, որոնց առկայության պարագայում միայն շենգենյան երկրների մասին օրենքը թույլ է տալիս այդ երկրում գործող դեսպանատներից «շենգեն» վիզա ստանալ, բացառությամբ այն դեպքերի, երբ Հայաստանում տվյալ եվրոպական երկիրը ներկայացուցչություն չունի:



Սրանք այն քաղաքացիների փաստաթղթերի պատճեններն են, որոնք օգտվել են ռուսաստանյան «շենգեն վիզայի» ծառայությունից:

Առաջին նամակիս պատասխանեցին, որ վիզան բացելու են Ֆինլանդիայի դեսպանատանը, քանի որ մեր երկրում Ֆինլանդիան չունի ներկայացուցչություն. «Դրա համար ձեր անձնագիրը ուղարկում ենք Մոսկվա՝ վիզան խփում են: Եվ դուք վճարում եք 3400 եվրո»:

Սակայն երբ անվտանգության հետ կապված երաշխիքներ ուզեցինք եւ հիշեցրինք, որ հայտարարության մեջ նաեւ եվրոպական այլ երկրների մասին է խոսք գնում, ծպտյալ միջնորդը պատասխանեց. «Ուրեմն շենգեն վիզան բացվում է մեկ ամսվա ընթացքում, գումար չեք տալիս, վիզան քսերոքս եմ անում՝ տալիս, դուք ճշտում եք իսկությունը, նոր վճարում: Ինչի՞ մենք մեզ պրոբլեմ պիտի սարքենք, վիզան բացվում է տվյալ պահին ազատ տեղ ունեցող դեսպանատանը»:

Մեկ այլ՝ «աննախադեպ առաջարկով» հանդես եկող միջնորդ էլ ընդամենը 2800 եվրոյով է գործը դասավորում՝ խոստանալով 1 ամսվա ընթացքում ձեզ ուղարկել Եվրոպա. «Սկզբում վճարում եք գումարի ընդամենը 10 տոկոսը, իսկ մնացածը՝ վիզան ստանալուն պես»,- խոստանում է «շենգենի «մասնագետը»:

Դժվար թե այս ամենի մասին մեր իրավապահ մարմինները տեղյակ չլինեն, հատկապես՝ որ հարցն ուղղակիորեն առնչվում է մեր երկրի ազգային անվտանգությանը: Դատելով «շենգենի գործ» անողների անվախ եւ բացահայտ գործելաոճից՝ կարելի է ենթադրել, որ նրանք էլ իրենց հերթին անվտանգության երաշխիքներ են ստացել ՀՀ իրավապահ մարմիններից: Հակառակ դեպքում մեր երկրի սահմանապահների մոտ պետք է գոնե տարրական հարց առաջանար, թե իր անձնագրում ոչ մի անգամ Ռուսաստանի մուտքի կնիք չունեցող ՀՀ քաղաքացին ինչպե՞ս է «շենգեն» վիզան ստացել Մոսկվայում գործող եվրոպական երկրների դեսպանատներից: Այն դեպքում, երբ դեսպանատուն մտնելու համար անձի ներկայությունը հիմնականում պարտադիր է:

«Առավոտի» աղբյուրների հավաստմամբ՝ այդ ճանապարհով վերջին շրջանում արդեն իսկ «շենգեն» վիզա են ձեռք բերել եւ Հայաստանից հեռացել են հարյուրավոր ՀՀ քաղաքացիներ: Նրանց գործերը միջնորդները դասավորել են ՌԴ-ում գործող Իտալիայի, Լեհաստանի, Ֆինլանդիայի, Հունաստանի դեսպանատներում:

Ներկայումս մեր ձեռքի տակ են մի շարք անձանց անձնագրերի պատճեններ, որոնք Հայաստանից ընդմիշտ մեկնել են մեր նշած ճանապարհով: Նրանցից որեւէ մեկին սահմանապահները, որոնք ազգային անվտանգության աշխատակիցներ են, սահմանի վրա «չեն նեղացրել», հարցուփորձ չեն արել:

Նույնիսկ վիճակագրական տվյալներ են փաստում, որ մեր երկրից նոր թափով արտագաղթ է սկսվել: Միգրացիոն պետական ծառայության տվյալների համաձայն՝ անցյալ տարվա 11 ամիսների ընթացքում մեր երկրից մոտ 66 հազար մարդ ավելի է մեկնել, քան ժամանել: Որոշ հաշվարկներով էլ, 2011-ին Հայաստանից վերջնականապես արտագաղթել է 45 հազար քաղաքացի:

Եթե արտագաղթի այս տեմպերը շարունակվեն, ապա հանուն Հայաստանի կայուն զարգացման ռազմավարություն որդեգրած ՀՀ կառավարությունը ընդամենը մի քանի տարի հետո պետք է սկսի ծրագրեր մշակել դատարկ Հայաստանը բնակեցնելու:

ԼՈՒՍԻՆԵ ԲՈՒԴԱՂՅԱՆ

Հ. Գ. «Շենգեն» վիզայի միջնորդները, որոնք ՀՀ քաղաքացիներին վիզա են բացում ՌԴ-ում, նույնիսկ Հայաստանում գործող եվրոպական դեսպանատների գործին են «խփում»:

# Ծերանոցի բնակիչների համար ընտրությանը մասնակցելը խնդիր է

## Նրանց հորդորում են Նորքից գնալ-հասնել Մալաթիա, Ավան կամ մարզեր՝ բնակության հասցեների տեղամասերում ընտրությանը մասնակցելու

Նորք-Մարաշում գործող տուն-ինտերնատի մոտ 90 տարեց բնակիչներին զրկում են ընտրելու իրավունքից. նրանց անձնագրային բաժանմունքում մերժել են ինտերնատում գրանցվել, պատճառաբանելով՝ գնացե՛ք, ընտրություններից հետո կգաք:

«Մեզ չեն գրանցում, ձայնազուրկ ենք դարձել: Էկել, ընդունվել ենք՝ դեռ չեն գրանցել, հիմա էլ պահանջում եմ, չեն գրանցում: Ես ոչ մի տեղ գրանցում չունեմ, տունը վաճառել են, ինձ էլ դուրս են էրել: Էս մարդիկ հաց ու ջուր են տալիս, ամեն ինչով բավարարում են, հիմա էլ ստեղից հելնենք՝ ո՞ւր էրթանք: Իրանք աթոռ ունեն, դային նստած են աթոռի վրա, ես էլ ծեր, 82 տարեկան կին եմ, ընձի ո՞ւր վռնդեն: Տնեն վռնդին, քաղքից էլ վռնդեն: Ձայնից էլ են զրկում»,- «Առավոտի» հետ զրույցում դժգոհեց ինտերնատի բնակիչ Մարուսյա Սարգսյանը:

Ինտերնատի մեկ այլ բնակիչ՝ Գոհար Ստեփանյանն էլ գրանցում ունի, բայց ոչ Երեւանում, եւ քանի որ 2001 թվականից բնակվում է Նորքի տարեցների տուն-ինտերնատում, ուզում է այստեղ գրանցվել եւ իր բնակության վայրում ընտրել իր տարածքի պատգամավորին, սակայն անձնագրային բաժնից նրան հորդորել են գնալ իր մարզում ընտրություն կատարել:

Թե ինչո՞ւ մոտ 90 տարեցներ, տարիներ շարունակ բնակվելով ինտերնատում, այսօր փաստացի գրանցում չունեն, «Առավոտի» հարցին ինտերնատի աշխատակիցներից մեկը վստահեցրեց, որ տնօրինությունը 2 ամիս է՝ փոխվել է. «Ես չգիտեմ՝ ինչո՞ւ նախկին տնօրենը չի զբաղվել այս մարդկանց գրանցելու խնդրով»: Ինտերնատի աշխատակցի ներկայացմամբ՝ դեռ մեկ ամիս առաջ են դիմել անձնագրային բաժնի տարածքային բաժանմունք, որտեղ մշտապես ձգձգել են, իսկ արդեն ընտրությունների նախաշեմին ընդհանրապես հրաժարվում են գրանցել. «Մեզ ասացին, իբր թե իրենց վերեւներից հրահանգված է խմբակային գրանցում չանել, բա այս մարդիկ ընտրությունից զրկվե՞ն: Եթե մարդը բնակվում է մեզ մոտ, իրավունք ունի փաստացի գրանցվելու: Բնակիչներ կան, ճիշտ է, գրանցում ունեն, բայց քաղաքի տարբեր մասերում, իսկ տնօրինությունն ի վիճակի չէ 90 հոգուն տանել Դավիթաշեն, Ավան կամ մեկ այլ տեղ, որպեսզի նրանք կարողանան քվեարկել»:



Այս առնչությամբ ՀՀ ոստիկանության անձնագրերի եւ վիզաների վարչության պետ Հովհաննես Քոչարյանը մեզ հայտնեց, որ այն ծերերը, որոնք Երեւան համայնքից դուրս են գրանցված, կարող են լրացուցիչ ցուցակներով մասնակցել ընտրությանը, սակայն նրանք, որոնք Երեւանի գրանցում ունեն, օրենքը թույլ չի տալիս լրացուցիչ ցուցակներով մասնակցել ընտրությանը, եւ նրանք պետք է իրենց գրանցման վայրում ընտրություն կատարեն: Իսկ մեծամասնական ընտրությանը մասնակցելու համար, պարոն Քոչարյանի խոսքերով, պարտադիր փաստացի գրանցում է անհրաժեշտ. «Ծերերը, երբ իմացել են, որ փաստացի գրանցման համար պետք է նախկին բնակության վայրի գրանցումից դուրս գան, աղմուկ են բարձրացրել: Փաստացի գրանցում կատարելու համար 8-10 օր է պահանջվում: Անձնագրային բաժանմունքը շուտով ցուցակները տպագրելու է եւ չի հասցնի փաստացի գրանցումներ կատարել: Այդ խեղճ ծերերին լցնում են ավտոբուսը, բերում, որ ուղղորդված ընտրություն անեն»: Ինչ վերաբերում է ինտերնատի տնօրինության՝ փաստացի գրանցման համար մեկ ամիս առաջ դիմելուն ու մերժվելուն, պարոն Քոչարյանն ասաց. «Ինչ-որ մեկը եկել է ու ցուցակ ներկայացրել, ասելով՝ բոլորին գրանցեք, մերոնք պահանջել են լիազորագիր, լիազորագիր չեն ներկայացրել՝ մերոնք էլ չեն գրանցել»:

ՆԵԼԼԻ ԲԱԲԱՅԱՆ

Առավոտ
aravot daily
ՀԻՆԳՇԱԲԹԻ 26.04.2012



Աշխատանքային այցով Հայաստան ժամանած Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազ Յուրի Չայկան եւ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանը երեկ ստորագրեցին երկու երկրների դատախազությունների

# Ռուսաստանի դատախազը Նախագահի կողմից հանձնեց

միջեւ 2012-2013թթ. համագործակցության ծրագիր:

ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանը ներկայացնելով ծրագիրը՝ ասաց, որ այն «Իրավական համագործակցության լավագույն ձեւն է»: Նա ասաց, որ դեռ 2006թ.-ին երկու երկրների դատախազությունների միջեւ ստորագրված համագործակցության համաձայնագրի շրջանակներում սկիզբ դրվեց նաեւ քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու հարցերին:

Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազ Յուրի Չայկան էլ ասաց, որ 6 տարի է, ինչ համագործակցում են Հայաստանի գլխավոր դատախազի, գլխավոր դատախազության հետ, եւ այդ համագործակցությունը դրված է բարձր պրոֆեսիոնալ հիմքերի վրա: «Կարող եմ միանշանակ ասել, որ վերջին տարիներին մեր համագործակցությունը կայուն փուլ է մտել: Վստահ եմ, որ առանց Ձեր մասնակցության եւ աջակցության՝ այդքան տպավորիչ արդյունքներ չէինք արձանագրի»,- ասաց Յու. Չայկան:

Ի դեպ, նախատեսվում են համատեղ քննարկումներ եւ «կլոր սեղաններ» ծայրահեղական եւ ահաբեկչական նպատակներով ինտերնետն օգտագործելու դեմ պայքարի հիմնախնդիրներին եւ պրակտիկային նվիրված:

Կքննարկվեն կոռուպցիոն բնույթի հանցագործությունների դեմ պայքարի ոլորտում փորձի փոխանակման, քրեական գործերով իրավական օգնություն տրամադրելիս միջազգային համագործակցության ժամանակակից ձեւերն ու մեթոդները, կուսումնասիրվի քրեական գործերով հանձնման եւ իրավական օգնության ոլորտում Հայաստանի եւ Ռուսաստանի դատախազությունների փորձը:

Ռուսաստանի դատախազը փոխանցեց ՌԴ Նախագահի ապրիլի 14-ի հրամանագրով շնորհված պարգեւը՝ «Պատվո շքանշանը», որին մեր դատախազն արժանացել էր իրավակարգի եւ օրինականության ամրապնդման ոլորտում հայ-ռուսական համագործակցության զարգացման գործում ունեցած ներդրման համար:

# Անդրազգային հանցագործությունները տարբեր դրսեւորումներ ունեն

Հայերի կատարմամբ Հայաստանի սահմաններից դուրս հանցագործությունների թի՞վն է ավելացել, թե՞ Հայաստանի իրավապահներն են ինտեգրվել միջազգային իրավական համայնքում՝ գործընկերոջ կարգավիճակով: Այս եւ միջազգային հետախուզման մեջ գտնվող անձանց դատավարական իրավունքների վերաբերյալ զրուցեցինք ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Արմեն Դանիելյանի հետ:

Պարոն Դանիելյան, պաշտոնական տվյալների համաձայն, 2011 թվականին գրեթե կրկնակի անգամ ավելացել է տարբեր քրեական գործերով այլ երկրների իրավապահ մարմիններից ստացվող միջնորդությունների թիվը: Արդյոք դա նշանակո՞ւմ է, որ հայերն ավելի շատ են սկսել հանցագործություն անել արտերկրում:

- Վերջին տարիներին դատախազությունն իսկապես ընդլայնել է միջազգային իրավական ոլորտում համագործակցության շրջանակները եւ ձեռք ենք բերել վստահելի գործընկերոջ համարում: Հետեւողական աշխատանքներ են տարվել ինչպես երկկողմանի, այնպես էլ բազմակողմանի համագործակցությունն առավել զարգացնելու ուղղությամբ: Այսինքն՝ կնքվում են իրավական փոխօգնության վերաբերյալ երկկողմանի համաձայնագրեր եւ ակտիվորեն ներգրավվում ենք միջազգային կառույցների աշխատանքներում: Բավական է միայն նշել, որ վերջերս միջազգային կարեւորության 2 մեծ միջոցառում տեղի ունեցավ Երեւանում՝ նախ ԱՊՀ անդամ-պետությունների գլխավոր դատախազների կոորդինացիոն խորհրդի նիստը, ապա նաեւ՝ Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի 5-րդ լիագումար նիստը: Այս համագործակցությունը բնավ էլ ինքնանպատակ չէ: Անդրազգային հանցագործությունները տարբեր դրսեւորումներ ունեն, հանցավոր խմբավորումները եւ անհատ հանցագործները փորձում են խուսափել պատասխանատվությունից՝ այլ երկրներ փախուստի դիմելով, որոնց դեմ պայքարը կարող է արդյունավետ լինել տարբեր երկրների իրավապահ մարմինների միջեւ տեղեկատվության օպերատիվ փոխանակման, համագործակցության, տարբեր հանցատեսակների դեմ պայքարի քննության մեթոդիկայի փորձի փոխանակման միջոցով: Այս առումով, իրոք, վերջին տարիներին կարողացել ենք դրական արդյունքի հասնել, մի շարք երկրների իրավապահ մարմինների հետ ձեւավորվել են համագործակցության ռեալ կառուցակարգեր, եւ որ ամենակարեւորն է՝ փոխվստահության մթնոլորտ: Եվ վիճակագրական տվյալների աճը ուղղակի դրա ակնառու վկայությունն է: Ինչպես նշեցիք, 2011 թվականին կտրուկ ավելացել է օտարերկրյա համապատասխան մարմինների հետ փաստաթղթաշրջանառությունը: Եթե 2011 թվականին մենք ստացել ենք 4013 հարցում եւ ուղարկել շուրջ 2915-ը, ապա 2010 թվականին այս ցուցանիշներն անհամեմատ համեստ էին՝ ստացվել էր 1700 հարցում, ուղարկվել՝ 1681-ը:

Եվ հենց այս համագործակցության արդյունքում է, որ ի հայտ եկան նաեւ մի շարք խնդիրներ, բացեր, որոնք պահանջում էին օրենսդրական կարգավորումներ: Մասնավորապես՝ պրակտիկայում ի հայտ եկան օրենսդրական բացեր Հայաստանում հայտնաբերված հետախուզման մեջ գտնվող անձանց կալանավորելու, հանձնելու ընթացակարգերի հետ կապված, ինչպես նաեւ ՀՀ Սահմանադրության 30 պրիմ հոդվածի կիրառման առումով, որը նախատեսում է Հայաստանի Հանրապետության քաղաքացուն օտարերկրյա պետությանը հանձնելու ընթացակարգ...

Կներեք, ուզում եք ասել, որ արտասահմանում հանցագործություն կատարած եւ Հայաստանում հայտնաբերված ՀՀ քաղաքացուն մեր օրենսդրությունը թույլ է տալիս հանձնել այլ պետության պահանջո՞վ: Եղել են բազում դեպքեր, երբ մերժվել է քաղաքացու հանձնումը նրա ՀՀ քաղաքացի լինելու պատճառաբանությամբ:

- Մինչեւ վերջերս մեր օրենսդրությամբ արգելքը միանշանակ էր: 1995 թվականին ընդունված Սահմանադրությունն ուղղակի արգելում էր ՀՀ քաղաքացու հանձնումը: Սակայն 2005 թվականին Սահմանադրությունում կատարված փոփոխությունների արդյունքում, ինչպես արդեն նշեցի, լրացվեց 30 պրիմ հոդվածով, ըստ որի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացուն չի կարելի հանձնել օտարերկրյա պետությանը, բացառությամբ Հայաստանի վավերացրած միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի: Այսինքն՝ նախատեսվել է հետախուզման մեջ գտնվող ՀՀ քաղաքացուն հանձնելու հավանականությունը: Բայց օրենսդրությամբ կանոնակարգված չէր, թե, օրինակ, ով պետք է իրականացներ միջազգային իրավական վարույթը: Միջազգային հետախուզման մեջ գտնվող անձին հայտնաբերելիս ո՞ր դեպքում կարելի է ձերբակալել, կարելի՞ է նրան ձերբակալված անձանց պահելու վայրերում պահել, թե՝ ոչ, նրան կալանքի տակ վերցնելու համար ո՞վ պետք է դիմի դատարան: Իսկ սրանք այն հարցադրումներն են, որոնք ուղղակիորեն առնչվում են մարդու իրավունքների պաշտպանության հետ:



Խնդիրներն ի մի բերելու համար միջազգային իրավական կապերի բաժինը նախ ուսումնասիրեց իրավիճակը՝ վերջին 5 տարվա կտրվածքով: Համադրվեց պրակտիկան ու օրենսդրությունը, օրենսդրական բացերը, որոնք երբեմն տարակարծության տեղիք էին տալիս եւ հարցը քննարկվեց ՀՀ դատախազության կոլեգիայում: Գլխավոր դատախազը հանձնարարեց մշակել օրենսդրական փոփոխությունների փաթեթ՝ ուղղված օտարերկրյա պետություններում հանցանք կատարած եւ Հայաստանում հայտնաբերված օտարերկրյա անձանց ձերբակալման ժամանակ հանձնման նպատակով կալանավորման իրական ընթացակարգին:

Որքանով տեղյակ ենք, ներկայումս գործում է միջգերատեսչական աշխատանքային խումբ, որը մշակում է քրեական դատավարության նոր օրենսգիրք: Ինչ կարիք կա փոփոխություններ կատարել մի օրենքում, որը, այսպես թե այնպես, փոխվելու է:

- Այո, դատաիրավական բարեփոխումների համատեքստում մշակվող նոր օրենսգրքի ընդունումը առաջիկա ամիսներին չի նախատեսվում: Ներկայիս խորհրդարանն արդեն ավարտում է իր լիազորությունները, սակայն օրենսդրության մեջ կային բացեր, որոնք հրատապ լուծում էին պահանջում, ուստիեւ չսպասեցինք նոր օրենսգրքի ընդունմանը եւ մի շարք փոփոխություններով եւ լրացումներով առաջարկեցինք կանոնակարգել ի հայտ եկած օրենսդրական բացթողումները: Ի պատիվ խորհրդարանի՝ առաջարկված փոփոխությունները կարեւորվեցին եւ փոփոխություններն ու լրացումներն ընդունվեցին: Մասնավորապես, որոշակի բարդություններ էին առաջանում «Քաղաքացիական, ընտանեկան եւ քրեական իրավական օգնության եւ իրավական հարաբերությունների մասին» Մինսկի կոնվենցիայի եւ «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի միացած օտարերկրյա պետությունների կողմից հետախուզվող անձանց Հայաստանում կալանավորելու ընթացակարգերի հետ կապված: ՀՀ Սահմանադրության ու «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի համաձայն՝ կալանավորված յուրաքանչյուր անձ պետք է տարվի դատավորի մոտ, մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված չէ օտարերկրյա պետությունների կողմից հետախուզվող անձանց կալանավորելու մասին միջնորդություն դատարան ներկայացնելու ընթացակարգը: Այսինքն, խնդիր կար Քրեական դատավարության օրենսգիրքը համապատասխանեցնել ՀՀ Սահմանադրությանն ու Եվրոպական կոնվենցիաների պահանջներին: Եվ առաջարկեցինք փոփոխություններ եւ լրացումներ կատարել ինչպես Քրեական դատավարության օրենսգրքում, այնպես էլ «Ձերբակալված եւ կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքում:

Պարոն Դանիելյան, միջազգային հետախուզման մեջ գտնվող անձին կալանավորելու համար անհրաժեշտ է Հայաստանի դատարանների համաձայնությո՞ւնը, թե՞ հետախուզում հայտարարած երկրի ներկայացրած փաստաթղթերը կարող են բավարար լինել:

- Սրանք հենց այն հարցերն են, որոնք մենք փորձել ենք կարգավորել առաջարկվող փոփոխություններով: Եվ ուրախ եմ, որ խորհրդարանը նույնպես կարեւորեց հարցը եւ ընդունեց: Կարող եմ ասել, որ արդեն ընդունված փոփոխությունների համաձայն՝ արտերկրում հանցագործություն կատարած եւ Հայաստանում հայտնաբերված անձի ձերբակալման մասին պետք է անհապաղ տեղյակ պահվի ՀՀ գլխավոր դատախազությանը, որն էլ իր հերթին ձերբակալման արձանագրությունն ստանալուց հետո անհապաղ այդ մասին պետք է հայտնի հետախուզում հայտարարած երկրի իրավապահ մարմիններին եւ ՀՀ արտաքին գործերի նախարարությանը: Անձը կարող է ձերբակալված մնալ 72 ժամ, ինչպես մեր երկրում հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձանց պարագայում: Հանձնելու նպատակով հայտնաբերված հետախուզվողների նկատմամբ կալանավորումը կարող է կիրառվել մինչեւ 40 օր ժամկետով, եթե միջազգային պայմանագրերով այլ ժամկետ նախատեսված չէ: Ժամանակավոր կալանավորումը կարող է կիրառվել բացառապես դատարանի որոշմամբ: Ընդ որում՝ միջնորդությունը պետք է ներկայացնի դատախազը՝ կից ներկայացնելով ձերբակալման արձանագրության պատճենը, օտարերկրյա իրավասու մարմնի՝ անձին ժամանակավոր կալանավորելու մասին միջնորդությունը կամ նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին որոշումը, դատավճիռը: Ուզում եմ արձանագրել, որ դատախազությունը իրավասու է զբաղվել բացառապես մինչդատական վարույթում գտնվող քրեական գործերով հետախուզման մեջ գտնվող եւ Հայաստանում հայտնաբերված անձանցով, իսկ եթե հետախուզվողն արդեն ունի ամբաստանյալի կարգավիճակ կամ դատապարտյալ է, այլ խոսքով նրա վերաբերյալ քրեական գործը հետախուզում հայտարարած երկրում գտնվում է դատարանի վարույթում կամ արդեն իսկ կայացվել է դատավճիռ, ապա նրանց հարցերով արդեն պետք է զբաղվի արդարադատության նախարարությունը:

- Կներեք, Դուք նշեցիք, թե անձը կարող է կալանավորվել մինչեւ 40 օր ժամանակով, մինչդեռ առաջարկվող փոփոխությունների մեջ խոսվում էր 2 ամսվա մասին նաեւ:

- Դրանք էապես տարբեր եւ իրար փոխլրացնող, փոխկապակցված իրավական ընթացակարգեր են: Մի պարագայում խոսքը վերաբերում է արտերկրում հանցագործություն կատարած անձի ժամանակավոր կալանավորման մասին, իսկ մյուս դեպքում՝ հանձնելու համար կալանավորելու: Ժամանակավոր կալանավորումը, ինչպես արդեն նշեցի, կարող է կիրառվել 40 օր ժամկետով՝ հանձնելու վերաբերյալ հետախուզում հայտարարած երկրի միջնորդությունը ստանալու եւ հանձնումը բացառող հանգամանքները պարզելու նպատակով: Իսկ հանձնելու նպատակով կալանավորումը՝ 2 ամսով: Ընդ որում՝ օրենսդիրը շատ հստակ ամրագրել է, որ ժամանակավոր կալանավորման համար նախատեսված առավելագույն ժամկետի ընթացքում հանձնելու վերաբերյալ միջնորդություն չստանալու դեպքում անձը պետք է ազատ արձակվի: Նա ենթակա է անհապաղ ազատ արձակման, եթե նաեւ մեր՝ ներպետական դատական ատյանները մերժեն հանձնելու համար կալանավորելու միջնորդությունը կամ պարզվեն հանձնումը բացառող հանգամանքները:

Հարցազրույցը՝

ՌՈՒԶԱՆ ՄԻՆԱՍՅԱՆԻ

# «Ժառանգությունը» կազատի հարկերից

## Իսկ ՀԱԿ-ը ակադեմիան հ/կ կդարձնի

«Ժառանգություն» կուսակցությունն իր նախընտրական ծրագրում ահազանգում է, որ դպրոցը լիարժեք չի կատարում քաղաքացի կրթելու, դաստիարակելու իր առաջնային գործառույթը, բարձրագույն ուսումնական համակարգում շարունակում է ծաղկել կոռուպցիան, իսկ կրթության պահանջը փոխակերպվել է ընդամենը դիպլոմի պարզունակ պահանջի: Կրթության համակարգի հետեւողական քայքայումը, ըստ կուսակցության, տանում է երիտասարդության մտավոր եւ բարոյական մակարդակի անկման, մտավորականները պահանջված չեն, գիտնականները մատնված են բախտի քմահաճույքին: «Ժառանգություն» կուսակցության նախընտրական ծրագրի համաձայն, ՀՀ գիտակրթական համակարգի բարեփոխումներում պետք է տեղ գտնի համապատասխան բարեփոխումների ռազմավարական հայեցակարգի մշակումը՝ որպես հիմք ընդունելով եվրոպական կառույցների հետ սերտաճումն ու միջազգային պայմանագրերի ընդունումը՝ միաժամանակ պահպանելով գոյություն ունեցող գիտակրթական բարձր արժեքներն ու չափանիշները, գիտության, գիտատար արտադրությանը սպասարկող ճյուղերի զարգացումը, կրթական համակարգի համապատասխանեցումը ժամանակակից պահանջներին, մշակութային ազգային ժառանգության պահպանումն ու զարգացումը: Ըստ նույն փաստաթղթի, արմատական բարեփոխումներ պետք է իրականացնել մասնավորապես ՀՀ գիտության կառավարման ու համակարգման բնագավառում եւ գիտության ֆինանսավորումը հասցնել գիտության դերը կարեւորող երկրների մակարդակին՝ ՀՆԱ-ի 3%-ին: «Ժառանգությունն» առաջարկում է դրան հասնել հատուկ մշակված 10-ամյա ռազմավարության շրջանակներում՝ 2013թ. պետական բյուջեում ապահովելով ֆինանսական հատկացումներ՝ ՀՆԱ-ի 1%-ի չափով, իսկ մինչեւ 2020-ը գիտության ֆինանսավորման մասնաբաժինը ՀՆԱ-ում պետական բյուջեի եւ տնտեսության մասնավոր հատվածի հաշվին աստիճանաբար հասցնել 3%-ի: Որպես գիտության ոլորտում մասնավոր ներդրումների խթանման միջոց, ըստ կուսակցության ծրագրի, հարկ է կիրառել գիտությունում կատարված ներդրումների կրկնապատիկի չափով շահութահարկի նվազեցում:

Գիտաշխատողների գործունեության գնահատման համար «Ժառանգությունն» առաջարկում է հիմք ընդունել միջազգային չափորոշիչները, այդ թվում՝ ազդեցության գործակից ունեցող եւ ինդեքսավորվող ամսագրերում ու ժողովածուներում տպագրված հոդվածների, դրանց հղումների, ինչպես նաեւ համապատասխան վարկանիշ ունեցող հրատարակչություններում հրապարակվող մենագրությունների քանակը: Կուսակցությունը նախատեսում է ԲՈՀ-ի վերակազմավորման եւ բարեփոխման միջոցով բարելավել բարձրագույն որակավորման շնորհման մեխանիզմները եւ դրանք համապատասխանեցնել միջազգային չափորոշիչներին, նաեւ գրահրատարակչության ոլորտը լիովին ազատել ավելացված արժեքի հարկից եւ շահութահարկից:

Հայ ազգային կոնգրեսը (ՀԱԿ) ՀՀ կրթության եւ գիտության զարգացման հեռանկարային ծավալուն ծրագիր ունի: «Գիտության եւ բարձրագույն կրթության զարգացումը խիստ կենսական նշանակություն ունի հատկապես բնական պաշարներով ոչ հարուստ, բարդ աշխարհաքաղաքական խնդիրներ ունեցող Հայաստանի համար: Հիմնարար գիտությունների եւ բարձր տեխնոլոգիաների զարգացումը արդյունավետ եւ մրցունակ հիմք է գիտատար ապրանքի վրա հիմնված տնտեսության հիմնադրման եւ արդի մարտահրավերների հաղթահարման համար»,- ասվում է ՀԱԿ-ի նախընտրական ծրագրում: ՀԱԿ-ն առաջարկում է պետության կողմից գիտության կառավարման ներդաշնակում՝ կրթության եւ մշակույթի ոլորտներում իրականացվող քաղաքականության հետ, նկատի ունենալով, որ վերոգրյալ ոլորտները փոխկապակցված են հետեւյալ բանաձեւով՝ «գիտությունը նոր գիտելիք է գեներացնում, այն՝ կրթության միջոցով, փոխանցում է սերունդներին, իսկ ձեռք բերած գիտելիքը պահպանում է մշակույթը»: Ըստ ՀԱԿ-ի ծրագրի, գիտական, կրթական եւ մշակութային հիմնարկների կենտրոնական միավորն ու ֆինանսավորման տնօրինողը պետք է լինի գիտաշխատողն ու դասախոսը: Ի թիվս այլ «բացերի», ՀԱԿ-ը փաստում է, որ գիտական եւ գիտահետազոտական բնագավառը մշտապես թերֆինանսավորված է, ինչը հնարավորություն չի տալիս իրականացնել խոշոր գիտական նախագծեր, չի լուծում նորագույն թանկարժեք սարքավորումների ձեռքբերման եւ սպասարկման խնդիրները, չի ստեղծում հնարավորություն գիտության, գիտական խմբերի եւ տնտեսության միջեւ ճկուն հարաբերություններ հաստատելու համար, վտանգված է հայաստանյան գիտակրթական, գիտահետազոտական հաստատությունների միջազգային վարկանիշը: Կոնգրեսի գնահատականի համաձայն, ոլորտում ձեւավորված չէ մրցակցային միջավայր, չի կազմավորվել կրթական եւ հետազոտական ծառայությունների շուկա, իսկ բարձրագույն կրթության ուսումնական ծրագրերը ճկուն չեն, դրանց կազմավորման պրոցեսը բյուրոկրատացված է, զուրկ մրցակցային հենքից եւ անկախ փորձագիտական գնահատումից: ՀԱԿ-ը խոստանում է վերանայել պետական բուհերի՝ որպես պետական ոչ առեւտրային կազմակերպությունների իրավական կարգավիճակը՝ դրանք վերածելով հանրային ուսումնական հաստատությունների, բուհերի եւ գիտահետազոտական հաստատությունների կողմից օգտագործվող անշարժ գույքը եւ նյութատեխնիկական ենթակառուցվածքները վերահաշվառումից հետո անհատույց՝ որպես պետական ներդրում, փոխանցել վերակազմավորվող հաստատություններին: Կոնգրեսը նաեւ նպատակ ունի հիմնարար գիտությամբ զբաղվող գիտական հիմնարկների համար ձեւավորել իրավական կարգավիճակ, որը հնարավորություն կտա հիմնականում (80% եւ ավելի) ֆինանսավորվել պետության կողմից եւ ունենալ գիտական հետազոտությունների ուղղություններ ընտրելու ազատություն: ՀԱԿ-ը այլ մոտեցում ունի ԳԱԱ-ի հանդեպ. մտադիր է ԳԱԱ ակադեմիկոսների ինստիտուտը վերակազմավորել հասարակական կազմակերպության, իսկ գիտական կազմակերպությունների ներկա համակարգը վերածել ինքնակառավարվող գիտական միավորման: ՀԱԿ ծրագրում նշված է, որ նպատակահարմար է վերացնել «ավագ դպրոց բուհ» անցման ընթացքում տարատեսակ քննությունների (միասնական, կենտրոնացված եւ այլն) ներկայումս գործող համակարգը, ընդունելության կարգը սահմանել բուհի կողմից: ՀԱԿ-ը այլ բաներ էլ է նախատեսել. «Կվերացվեն ուսանողների՝ կուտակած կրեդիտների հիման վրա մասնագիտությունը փոխելու կամ այլ բուհ փոխադրվելու իրավունքը խոչընդոտող օրենսդրական եւ կանոնակարգային արհեստական արգելքները, կվերափոխվի ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման գործող համակարգը՝ այն կհամապատասխանեցվի միջազգայնորեն ընդունված ձեւաչափերին եւ միաժամանակ կապահովվի ՀՀ գիտական, գիտատեխնիկական, գիտակրթական համակարգերի արագ ինտեգրումը միջազգային համակարգերին: Միջազգային ճանաչման արժանանալուն զուգընթաց, պետության կողմից գիտական խորհուրդների հաստատված չափորոշիչների համաձայն՝ աստիճանական անցում կկատարվի նրանց կողմից գիտական աստիճանների եւ կոչումների շնորհմանը»: ՀԱԿ-ը մանրամասն եւ հիմնավորված նշում է ֆինանսավորման աղբյուրներն ու ուղիները եւ նպատակներին հասնելու երաշխիքները:

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

### «ՎիվաՍել-ՄՏՍ»-ը էսսեների մրցույթ կանցկացնի

«ՎիվաՍել-ՄՏՍ» ընկերությունը տեղեկացնում է, որ ընկերության Կարիերայի զարգացման ծրագրի շրջանակներում հայտարարվում է էսսեների մրցույթ՝ Հայաստանի համալսարանների ուսանողների շրջանում: Մասնակիցներն էսսեները կարող են ստորեւ նշված թեմաների շրջանակներում ներկայացնել իրենց նախընտրած ուղղվածությամբ. 1) Արդյո՞ք ինտերնետը միավորում է մարդկանց, թե՞ բաժանում, 2) Ինչպիսի՛ ազդեցություն ունի բջջային ինտերնետը կրթության վրա եւ առօրյա կյանքում, 3) Ինտերնետ. ինչպիսի՞ն կլինի զարգացման հաջորդ փուլը եւ 4) Ինչպե՞ս է սոցիալական մեդիան փոխել Ձեր կյանքը:

Մասնակցության կանոնները

1. Մասնակիցները պետք է ունենան ուսանողական տոմս, որը վավեր կլինի մինչեւ ծրագրի արդյունքների հայտարարումը: 2. Մասնակիցները պետք է օգտվեն «ՎիվաՍել-ՄՏՍ» ընկերության կողմից տրամադրվող ինտերնետից՝ իրենց հոդվածը տեղադրելու համար (օգտագործեն «ՄՏՍ կոնեկտ» մոդեմ, 3G տեխնոլոգիայի հետ համատեղելի հեռախոս, 3G երթուղիչ եւ այլն): 3. Ուսանողի աշխատանքը պետք է լինի բնօրինակ եւ չպետք է հրատարակված լինի մինչեւ ներկայացման օրը: 4. Հետազոտության մեջ առցանց տեղեկատվական աղբյուրների օգտագործումը խրախուսվում է: 5. Աշխատանքը պետք է բաղկացած լինի 18000 նիշից (առանց միջնատարածքների)՝ չհաշված գրականության ցանկը: Նշվածից ավելի կարճ կամ երկար աշխատանքները ընդունելի են՝ չափավոր լինելու դեպքում: Էսսեի մեջ պետք է ներառված լինի 150 բառի սահմաններում կազմված ամփոփագիրը: 6. Էջի ձեւաչափը պետք է լինի 2/2/2/2, 1,5 տող միջնատարածքով, տառերի չափը՝ 12, Arial կամ Times New Roman տառատեսակով: 7. Հեղինակներն իրենց աշխատանքները կարող են ներկայացնել հայերեն, ռուսերեն կամ անգլերեն: 8. Աշխատանքը պետք է գրված լինի առանց սխալների: Էսսեները չեն դիտարկվի, եթե դրանցում շատ սխալներ լինեն, կամ եթե չհամապատասխանեն սահմանված պահանջներին: 9. Առաջարկները պետք է ներառեն աշխատանքում օգտագործված գրականության ցանկը: 10. Մասնակիցները պետք է հստակ նշեն իրենց համալսարանի անունը եւ կոնտակտային տվյալները: 11. Մասնակիցները պետք է դիմեն անմիջականորեն http://mts.am/essay էլեկտրոնային կայքի միջոցով՝ մինչեւ 2012թ. մայիսի 15-ը:

Լավագույն աշխատանքները կհայտարարվեն 2012 թվականի մայիսի վերջին: Լավագույն աշխատանքները կընտրվեն անանուն ստուգման սկզբունքով՝ «ՎիվաՍել-ՄՏՍ» ընկերության տվյալ ծրագրի համար ստեղծված հատուկ հանձնաժողովի կողմից: Հաղթողները կստանան սմարթֆոններ եւ պլանշետային համակարգիչներ: Հաղթողների աշխատանքները կտեղադրվեն «ՎիվաՍել-ՄՏՍ» ընկերության վեբկայքի «Կարիերա» էջում եւ հասանելի կլինեն «ՎիվաՍել-ՄՏՍ» ընկերության գրադարանում:

# Մեն-մենակ՝ Կորեայում, բայց հաղթանակած՝ մրցույթում

ՀՀ նախագահի երիտասարդական մրցանակաբաշխությունը, որն անցկացվում է 2000 թվականից, պետք է լինի առաջին հերթին լավագույն երիտասարդ արվեստագետներին խրախուսելու միջոց: Անցյալ տարի մրցույթի «Երգեցողություն» անվանակարգում մրցանակակիր չգրանցվեց, իսկ հիմնական հավակնորդ, Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի մեներգիչ Հայկ Տիգրանյանը (բաս), 27 տարին լրանալու կապակցությամբ, այլեւս չի կարող մասնակցել հիշյալ մրցույթին: Այս օրերին օպերային երգիչը Հայաստանը ներկայացնում է Կորեայի Ժողովրդադեմոկրատական Հանրապետությունում 28-րդ անգամ անցկացվող «Ապրիլյան գարուն» միջազգային մրցույթ-փառատոնում, որտեղ «Երգեցողություն» անվանակարգում մասնակցում է եւս 150 երգիչ: Նախօրեին Ազգային օպերային թատրոնից լուր ստացանք, որ Հայկ Տիգրանյանը արժանացել է 2-րդ մրցանակի, 1-ինը Իտալիայի ներկայացուցիչն է, իսկ 3-րդ մրցանակը կիսել են Բելառուսի եւ Լեհաստանի ներկայացուցիչները:




«Առավոտը» կապվեց Հայկ Տիգրանյանի հետ: Մեր զրուցակիցը հայտնեց, որ Կորեայում տոնական տրամադրություն է՝ նշվում է հանրապետության հիմնադիր Կիմ Իր Սենի 100-ամյակը. «Մրցույթ-փառատոնին մասնակցում են նաեւ հրավիրված արտիստներ Մալայզիայից, Կուբայից, Ֆինլանդիայից, Մոնղոլիայից, Գերմանիայից, Բուլղարիայից, նույնիսկ Ամերիկայից եւ այլ երկրներից, որոնք Կորեայի հետ չունեն դիվանագիտական հարաբերություններ»: Հայկը նշեց նաեւ, որ ինքը միակ օպերային երգիչն էր, որը տեղի սիմֆոնիկ նվագախմբի հետ ելույթ է ունեցել Փխենյանի օպերային թատրոնում, կատարելով Գրեմինի արիան՝ Չայկովսկու «Եվգենի Օնեգին» օպերայից: Երգչի փոխանցմամբ՝ ինքն այդ պատվին արժանացել է ժյուրիի առաջարկով: Հարցին՝ հնարավոր չէ՞ր հանդես գալ արիայով հայկական որեւէ օպերայից, Հայկն ասաց. «Բացի մրցութային օրերից, կորեացի կոնցերտմայստերի հետ ունեցել եմ 5 համերգ, իսկ առաջին փուլում կատարել եմ Դավիթ-Բեկի արիան՝ Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայից»: Այս օրերին Փխենյանում են նաեւ մեներգիչներ տարբեր օպերային թատրոններից, ուստի հետաքրքրվեցինք՝ եղե՞լ են համագործակցության առաջարկներ: «Ոչ պաշտոնական առաջարկներ ստացել եմ Մինսկի, Քիշնեւի օպերային թատրոններից, իսկ աշնանը Լիպեցկում կայանալիք ավանդական դասական փառատոնի բացմանը երգելու հրավեր եմ ստացել»,- հայտնեց Հայկ Տիգրանյանը: Մեր զրուցակիցը նեղսրտեց, որ մրցույթ-փառատոնի բացմանը, երբ պետությունները ներկայանում էին պատվիրակություններով, ինքը մենակ էր՝ «Հայաստան» ցուցանակի տակ:

ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Առավոտ aravot daily
ՀԻՆԳՇԱԲԹԻ 26.04.2012

VivAcell MTS
ԷՁԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

# Հնարավոր է՝ կանանց բռնցքամարտում էլ օլիմպիական խաղերի մասնակից ունենանք

## Կանանց սիրողական բռնցքամարտն առաջին անգամ է մտել օլիմպիական խաղերի ծրագիր

Մեզ համար դեռ անսովոր այս մարզաձեւի ներկայացուցիչներն ամառային 30-րդ օլիմպիական խաղերի ռինգում չեմպիոնական տիտղոսի համար պայքարելու են երեք քաշային կարգերում՝ 51, 60 եւ 75: Իսկ դեպի Լոնդոն տանող միակ ճանապարհը կին բռնցքամարտիկների համար անցնում է Չինաստանով, որտեղ մայիսի 10-ից 20-ը կայանալու է աշխարհի կանանց առաջնությունը:

Հայաստանից այդ մրցաշարին մասնակցելու է երկու հոգի՝ 60 կգ քաշային Արմինե Սինաբյանը (լուսանկարում՝ ձախից, նա բնակվում եւ մարզվում է Շվեդիայում) եւ 75 կգ քաշային Աշխեն Սիմոնյանը: Ներկայումս երկուսն էլ ուսումնամարզական հավաք են անցկացնում Աբովյանում:

«Առավոտը» երեկ զրուցեց Հայաստանի կանանց հավաքականի գլխավոր մարզիչ Ռաֆայել Մեհրաբյանի հետ:

- Պարոն Մեհրաբյան: Դուք զբաղեցնում էիք տղամարդկանց ընտրանու գլխավոր մարզչի պաշտոնը...

- Այո: Իսկ հիմա գլխավորում եմ կանանց բռնցքամարտի հավաքականը:

- Հայաստանում կանանց բռնցքամարտ, որպես այդպիսին՝ գոյություն ունի՞:

- Պատկերացրեք՝ այո: Եվ առաջին քայլերն է անում: Հիմա մեր հավաքականում շուրջ 20 աղջիկ է մարզվում: Ճիշտ է, նրանք դեռ հեռու են միջազգային մրցումներում լուրջ հաջողությունների հասնելու մակարդակից, սակայն կարեւորն այն է, որ գործ արվում է:

- Այսինքն՝ կանոնավոր մարզումներ անցկացվո՞ւմ են:

- Այո:

- Բայց առաջընթաց ունենալու համար նախ ֆինանսական միջոցներ եւ մրցակցություն է հարկավոր:

- Համաձայն եմ: Կանանց բռնցքամարտը մեր հանրապետությունում առայժմ պետական ֆինանսավորում չունի: Այն պահում է ֆեդերացիան: Իսկ քաշային կարգերում մրցակցության խնդիր, իրոք, գոյություն ունի: Այդ բացն առայժմ աշխատում ենք լրացնել մարզումների եւ հավաքների ժամանակ տղաների էլ ներգրավելով: Նրանք շատ են օգնում:

- Այդպես երկա՞ր է շարունակվելու:

- Առայժմ կոնկրետ ոչինչ ասել չեմ կարող: Ուզում ենք անել մեզանից կախված ամեն բան, որպեսզի գոնե եկող տարվանից կանանց բռնցքամարտն էլ պետությունից ֆինանսավորվի:

- Ի՞նչ ասել է՝ հնարավոր ամեն բան:

- Հիմա մեր երկու աղջիկներ՝ 60 կգ քաշային Արմինե Սինաբյանը եւ 75 կգ քաշային Աշխեն Սիմոնյանը պատրաստվում են մեկնել աշխարհի առաջնություն: Եթե նրանք այնտեղ հաջող հանդես գան, արդյունք ցույց տան, կարծում եմ, դա եկող տարվանից պետությունից համապատասխան վերաբերմունքի հիմք կլինի:

- Իսկ աշխարհի առաջնությունում, որտեղ նաեւ օլիմպիական ուղեգրեր են խաղարկվում, մեր աղջիկները վարկանիշ ձեռք բերելու հնարավորություն ունե՞ն:

- Պիտի պայքարեն: Օրինակ՝ Արմինեն Եվրոպայի անցած տարվա առաջնության եզրափակչի մասնակից է: Եվ նրա հետ, հասկանալի է, որոշակի հույսեր կապում ենք: Բայց դա չի նշանակում, թե Աշխենը հենց այնպես է մեկնում մրցավայր:

- Օլիմպիական ուղեգիր նվաճելու համար Չինաստանում ի՞նչ տեղ պետք է զբաղեցնել:

- Գիտե՞ք, հաշվարկը կանանց բռնցքամարտում մի փոքր այլ կերպ է ընթանալու: Չինաստանում յուրաքանչյուր քաշային կարգում տարբեր աշխարհամասերի տարբեր քանակությամբ վարկանիշային տեղեր են հատկացված: Մենք ներկայացնում ենք Եվրոպան, որին հատկացված է երեքական ուղեգիր: Հետեւաբար, մեր աղջիկներն իրենց քաշային կարգերում պիտի առնվազն եվրոպացիների մեջ տեղ զբաղեցնեն երեք լավագույնների մեջ:

ԱՇՈՏ ՀԱԿՈԲՅԱՆ




### Արոնյանն ու Կրամնիկը լրացուցիչ պարտիա խաղացին

Գրոսմայստերներ Լեւոն Արոնյանի եւ ռուսաստանցի աշխարհի նախկին չեմպիոն Վլադիմիր Կրամնիկի միջեւ Ցյուրիխում ընթացող ընկերական մրցաշարի չորրորդ պարտիայում մրցակիցները բաժանեցին միավորը եւ հաշվի մեջ հավասարակշռությունը՝ 2:2: Բայց մրցակիցներն առաջին անգամ միավորը բաժանեցին նախատեսված երեք ժամից շուտ, եւ մրցաշարի կանոնակարգի պահանջի համաձայն՝ գրոսմայստերները նույն օրը արագ շախմատի մեկ լրացուցիչ պարտիա խաղացին: Այստեղ հաջողությունն ուղեկցեց սեւերով հանդես եկած հայ գրոսմայստերին, սակայն այդ հաշիվը չանդրադարձավ մրցամարտային ընդհանուր հաշվի վրա: Հաջորդ պարտիան կայանալու է ապրիլի 27-ին:

### Վախեցնում են ուկրաինացի գեղեցկուհիներով

Ֆուտբոլի Եվրոպայի առաջնության մեկնարկից առաջ Հոլանդիայի կենտրոնական հեռուստաալիքներով գովազդային մի տեսահոլովակ է ցուցադրվում՝ «Նրան տանը պահիր» անվանումով, որտեղ հոլանդուհիներին կոչ է արվում իրենց տղամարդկանց համոզել, որպեսզի նրանք չմեկնեն Ուկրաինա: Պատճառը ավելի քան հասկանալի է. Ուկրաինայում գեղեցիկ աղջիկները շատ-շատ են: Ուկրաինայի ԱԳՆ-ն այս կապակցությամբ խիստ անհանգստացած է, իսկ Հոլանդիայում Ուկրաինայի դեսպանն այդ երկրի ֆուտբոլի ֆեդերացիայից պահանջել է միջոցներ ձեռնարկել տեսահոլովակը շրջանառությունից հանելու համար՝ այն համարելով «նվաստացնող եւ մարդու իրավունքները ոտնահարող»:

Ա. Հ.



### Ցերեկույթ, որ վարեց հոբելյարը




«Ազգային գրադարանային շաբաթվա» շրջանակներում Երաժշտագիտական գրադարանի կողմից կազմակերպված հերթական միջոցառումներից մեկը, որ կայացավ օրերս, նվիրված էր պրոֆեսոր, երգիչ, կոմպոզիտոր, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Արզաս Ոսկանյանի ծննդյան 65 եւ ստեղծագործական գործունեության 60-ամյակին: Ցերեկույթն ուղեկցվեց ցուցահանդեսով, որտեղ ներկայացվեցին կոմպոզիտորի կյանքին ու գործունեությանը նվիրված նյութեր: Շնորհավորական խոսքով հանդես եկավ Երաժշտագիտական գրադարանի տնօրեն Գուլո Նահատակյանը:

Միջոցառումը վարում էր հոբելյարը, որը հակիրճ ներկայացրեց կյանքի, ստեղծագործական գործունեության անցած ուղին: Համերգային կատարումներով հանդես եկան պրոֆեսորի սաները: «Պատարագ» երգչախմբի կատարմամբ հնչեցին հատվածներ կոմպոզիտորի «Պատարագից»: Ցերեկույթն ավարտվեց պրոֆեսորի ելույթով, տիկնոջ՝ Քնարիկ Տեր-Սիմոնյանի նվագակցությամբ:

# «Գեներալնի ռեպետիցիա»՝ ըստ մարքսիստի

## Դավիթ Հակոբյանը կառաջադրվի նաեւ նախագահական ընտրությունների ժամանակ

«Խորհրդարանական ընտրությունները նախագահական ընտրությունների գլխավոր «ռեպետիցիոն» գործընթացներն են»,- այս կարծիքին է Հայաստանի Մարքսիստական կուսակցության նախագահ Դավիթ Հակոբյանը, ըստ որի՝ այստեղ է վճռվում այն, թե ով ինչ «քաշային կատեգորիայի» է պատկանում քաղաքական ոլորտում, ինչ գաղափարական կարողություններ ունի, եւ թե ինչպես է արժեւորվում հասարակության կողմից:

«Այսօր վտանգված է հայկական քաղաքակրթությունը: Ոչ մի գաղափարական սուբյեկտ, կուսակցություն, բացի դատարկ սոցիալական խոստումներից, դատարկ մտահղացումներից՝ հայ ժողովրդի հանդեպ, ավելին չի տալիս: Ես դեմոկրատիայի գաղափարական ինստիտուտից չեմ օգտվում, այն համարում են անարդյունավետ, որովհետեւ, բացի աբլորական 5 րոպեանոց ճառից, հասարակությանը ոչինչ ավելին չես կարող մատուցել: Այս պարագայում ես իմ տակտիկական զինանոցում ընդգրկել եմ բուժհիմնարկների, հիմնարկ- ձեռնարկությունների, դպրոցների, մտավորականության եւ ժողովրդի համատեղ հանդիպումները»,- նշեց Հայաստանի գլխավոր մարքսիստը՝ հայտարարելով, որ ինքը քաղաքական գործիչ մրցակից չունի: Նա համոզված է՝ ժողովուրդն իրեն ձայն կտա, մնում է միայն տեսնել, թե ինչպես կհարգեն իշխանությունները ժողովրդի կարծիքը:



«Այսպես թե այնպես՝ 41-րդ մանդատը կվերցվի Դավթի կողմից՝ գաղափարական պայքարով ու այն կլինի մարքսիստական մանդատ, որը կարող է ճակատագրական նշանակություն ունենալ»,- հայտարարեց Հակոբյանը:

Իսկ թե ո՞ւմ է մրցակից համարում՝ Մարքսիստական կուսակցության առաջնորդը նշեց. «Օրինակ, Հակոբ Հակոբյանին՝ «Պիվի Հակոբին» քաղաքական գործիչ չեմ համարում: Բացի այդ, եւ Ստեփան Հարությունյանը, եւ Հակոբ Հակոբյանը մտել են ընտրարշավ Սահմանադրության 65-րդ հոդվածի ոտնահարմամբ, նրանք գրանցվելու իրավունք չունեին: Նրանք՝ որպես քաղաքական գործիչ, ժողովրդի հոգու դավթարում էլ չկան, հատկապես «Պիվի Հակոբը» ժողովրդի կողմից «պերսոնա նոն գրադա է»:

Հարցին՝ ի՞նչ է մտածում Հակոբյանը նախագահական ընտրություններին մասնակցելու մասին արված իր հայտարարության մասով, Կարլ Մարքսի հայ հետեւորդը նշեց. «Կրկնում եմ՝ այս ընտրարշավն ինձ համար «գեներալնի ռեպետիցիա» է նախագահական ընտրություններից առաջ, ես իմ խոսքի տերն եմ: Գաղափարական առումով էլ ինձ համար մրցակիցներ չկան՝ ոչ տառաճանաչության, ոչ էլ գրագիտության իմաստով: Իսկ կապիտալի եւ քաղաքական բռնապետության իմաստով, իհարկե, վտանգավոր ախոյաններ են Հայաստանի Հանրապետության երկրորդ եւ երրորդ նախագահները, որովհետեւ Հայաստանում իշխանափոխությունը միշտ էլ կատարվել է «վերեւից»՝ քաղաքական ավանտյուրիզմի, պառլամենտական տեռորիզմի, պալատական հեղաշրջումների եւ բռնապարտության սկզբունքներով»:

ԵՎԱ ՀԱԿՈԲՅԱՆ